ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

«EX OFFICIO» (ԳՈՐԾԻ Ի ՊԱՇՏՈՆԵ ՔՆՆՈՒԹՅԱՆ) ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՈՒՄԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.04 - «Դատական իրավունք՝ դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2021

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ПЕТРОСЯН ЛИЛИТ ОГАНЕСОВНА

РЕАЛИЗАЦИЯ ПРИНЦИПА "EX OFFICIO" (РАССМОТРЕНИЕ ДЕЛА ПО ДОЛЖНОСТИ) В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04 - Судебное право (судоустройство, гражданский процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности)

ЕРЕВАН-2021

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ **Ս. Գ. Մեղրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր **Վ. Վ. Հովհաննիսյան**
իրավ. գիտ. թեկնածու,
ասիստենտ **Վ. Հ. Գրիգորյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի հուլիսի 1-ին, ժամը 12^{30}-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք.Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2021 թվականի մայիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ., դոցենտ **Տ. Հ. Սուջյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юрид. наук,
доцент **С. Г. Мегрян**

Официальные оппоненты: доктор юрид. наук,
профессор **В. В. Оганнисян**
кандидат юрид. наук,
асистент **В. О. Григорян**

Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита диссертации состоится 01-ого июля 2021 г. в 12^{30} часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г.Ереван, ул.Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 19-ого мая 2021 года.

Ученый секретарь специализированного совета: кандидат юридических наук, доцент **Т. О. Суджян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Վարչական արդարադատությունը ոչ միայն մեր երկրում, այլև ողջ հետխորհրդային տարածաշրջանում, թերևս, «ամենաերիտասարդ» ու միաժամանակ ամենասակավ չափով հետազոտված իրավական ինստիտուտներից է: Իրավունքի այս ճյուղի գոյության շուրջ 13 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ընդունված վարչական դատավարության երկու օրենսգրքերով կարգավորվեցին վարչական արդարադատության առանցքային հարցերը՝ այդ թվում նախատեսվեցին վարչական դատավարության սկզբունքները: Այդ սկզբունքների շարքում իր ուրույն տեղն ունի վարչական դատավարության առանձնահատկությունները պայմանավորող «ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքը (այսուհետ՝ նաև «ex officio» սկզբունք), որն օժտում է դատարանին ակտիվ դերակատարությամբ՝ ի պաշտոնե պարզելու գործի լուծման համար անհրաժեշտ փաստերը, ապահովելու ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունների վերացումը և այդ անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

Նման կարևորություն ունենալով՝ այս սկզբունքը վարչական դատավարությունում սակավ ուսումնասիրված և իրավակիրառ պրակտիկայում տարբեր խնդրահարույց հարցեր առաջացրած սկզբունքներից մեկն է, որի վերաբերյալ մինչ այժմ գիտական մակարդակով որևէ համապարփակ աշխատություն առկա չէ: Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ ՎԴՕ) չի պարունակում «ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի հասկացությանը, բովանդակությանը, կիրառման ծավալներին ու շրջանակին, դրա իրացմանը վերաբերող մանրամասն կարգավորումներ, ինչի հետևանքով այս սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունների կազմի, դրանց իրականացման կարգի և ծավալների, վերաքննության և վճռաբեկության փուլերում այս սկզբունքի դրսևորման վերաբերյալ առկա չէ միասնական դատական պրակտիկա: Ավելին, Վարչական դատարանի դատավորների՝ «ex officio» սկզբունքի իրացման կապակցությամբ ստացված դիրքորոշումների ամփոփումը ցույց է տալիս, որ միասնական մոտեցումներ առկա չեն նաև այս սկզբունքի բովանդակությունը կազմող մի շարք դատավարական գործողությունների, ինչպես օրինակ, դատարանի՝ գործին մասնակցող անձանց չվկայակոչած փաստերի պարզմանն ու հաստատմանն ուղղված քայլերի

ձեռնարկման, դատավարական գործողությունների իրականացման փուլերի, ծավալների և մի շարք այլ հարցերի առնչությամբ:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ «ex officio» սկզբունքի առնչությամբ առկա օրենսդրական բացերը և ձևավորված իրարամերժ իրավակիրառ պրակտիկան նվազեցնում են վարչական արդարադատության արդյունավետությունը, սահմանափակում են վարչական արդարադատության միջոցով անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքները, ինչպես նաև հանգեցնում են Վարչական դատարանի ծանրաբեռնվածության:

Արդյունքում, «ex officio» սկզբունքի հասկացությունը և բովանդակությունը բացահայտելու, «ex officio» բնույթ ունեցող դատավարական գործողություններից յուրաքանչյուրի նշանակությունը, կիրառման պայմանները, վերաքննության և վճռաբեկության փուլերում «ex officio» սկզբունքի դրսևորման առանձնահատկությունները բացահայտելու, օրենսդրական բացթողումներն ու թերությունները վերացնելու, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները վեր հանելու և դրանց լուծման հնարավոր ուղիներ մշակելու անհրաժեշտությունն օբյեկտիվորեն արդիականություն են հաղորդում սույն հետազոտությանը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հայրենական իրավական գրականության շրջանակում «ex officio» սկզբունքին առնչվող տեսական և գործնական հիմնախնդիրներն առանձին ուսումնասիրության առարկա չեն դարձել և համակողմանի վերլուծության չեն ենթարկվել: Այլ երկրների տեսաբանների կողմից նշված թեմայի վերաբերյալ ուսումնասիրությունները ևս սակավաթիվ են: Հետազոտության տեսական հիմք են կազմել արտասահմանյան հեղինակների գիտական աշխատությունները: Այդ աշխատությունների շարքում հատկապես պետք է ընդգծել Ն. Գ. Սալիշևայի, Գ. Օսբորնի, Ե. Ա. Շիլովայի, Օ. Պ. Չիստյակովայի, Օ. Վ. Պանկովայի, Վ. Վ. Յարկովայի, Ե. Ա. Սապրիկինայի, Պ. Ֆրանցեսկոյի, Ու. Կրամերի, Տ. Հինրիչսենի և այլոց աշխատությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են «ex officio» սկզբունքի իրացման արդյունքում ծագող դատավարական հարաբերությունները, իսկ առարկան՝ «ex officio» սկզբունքի իրացմանն ուղղված դատարանի լիազորություններն ամրագրող դատավարական նորմերը, իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև միջազգային փորձը և դոկտրինալ աղբյուրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը վարչական դատավարությունում «ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է և դրա հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկների մշակումը: Նշված նպատակի իրագործումը պահանջում է հետևյալ խնդիրների լուծումը.

1) բնորոշել «ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքը.

2) բացահայտել «ex officio» սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները.

3) որոշել «ex officio» սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողություններից յուրաքանչյուրի իրավաբանական բնույթը, նպատակը և իրացման կարգը.

4) ամփոփել «ex officio» սկզբունքի իրացման առնչությամբ դատական պրակտիկայում առաջացած խնդիրները.

5) բացահայտել «ex officio» սկզբունքի իրացման առանձնահատկությունները վերաքննության փուլում.

6) բացահայտել «ex officio» սկզբունքի իրացման առանձնահատկությունները վճռաբեկության փուլում.

7) կատարված հետազոտության արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել «ex officio» սկզբունքի վերաբերյալ վարչական դատավարության օրենսդրության իրավանորմերի կատարելագործման առաջարկներ:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմք են հանդիսացել «ex officio» սկզբունքին և վարչական դատավարության գործառույթային այլ սկզբունքներին առնչվող ՀՀ և արտասահմանյան երկրների նորմատիվ իրավական ակտերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի, Վարչական վերաքննիչ դատարանի և Վարչական դատարանի որոշումները, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Շվեդիայի, Ուկրաինայի, Վրաստանի և այլ երկրների՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերը և դատական պրակտիկան, ինչպես նաև Վարչական դատարանի աշխատակազմից ստացված տվյալները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտությամբ առաջադրված նպատակներին և խնդիրներին հասնելու համար կիրառվել են համընդհանուր՝ դիալեկտիկայի և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը: Աշխատանքը հայրենական իրավագիտության մեջ «ex officio» սկզբունքին վերաբերող առաջին համապարփակ և ամբողջական հետազոտությունն է, որում փորձ է կատարվել հնարավորինս մանրամասնորեն անդրադառնալ «ex officio» սկզբունքի իրացման հետ կապված մի շարք տեսական բնույթ կրող հիմնահարցերին և «ex officio» սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունների կիրառման ընթացքում ծագող գործնական խնդիրներին՝ առաջարկելով այդ խնդիրների լուծման ուղիներ: Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում, ինչպես նաև հեղինակի կողմից հրապարակված հոդվածներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Թեև ՎԴՕ-ն «ex officio» սկզբունքը ձևակերպել է որպես գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունք, իսկ տարբեր դատական ատյանների կողմից կայացված որոշումներում այն մեկնաբանվել է որպես բացառապես գործի փաստական հանգամանքների պարզմանն ուղղված սկզբունք, այդուհանդերձ, գտնում ենք, որ այս սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները միայն գործի փաստական հանգամանքները պարզելով սահմանափակելը հակասում է ոչ միայն ՎԴՕ-ով սահմանված այս սկզբունքի բովանդակությանը, այլև ատենախոսության մեջ քննարկված տվյալ սկզբունքի էությանն ու նշանակությանը:

Նման հետևությունների արդյունքում աշխատանքում առաջարկվել է ՎԴՕ-ում այս սկզբունքն ամրագրել որպես «ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունք, և տրվել է դրա հետևյալ բնորոշումը. «Վարչական դատավարության առանցքային սկզբունք, որն օժտում է դատարանին ակտիվ դերակատարությամբ՝ վերացնելու ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները և ապահովելու ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ

պաշտպանության միջոցի կենսագործումը՝ այդ սկզբունքի բովանդակությունը կազմող գործողությունների իրականացման միջոցով:»:

2. ՎԴՕ 5-րդ հոդվածը սահմանում է «ex officio» սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունների շրջանակը, սակայն դրանք առանձնացված չեն այլ դատավարական գործողություններից, մինչդեռ նման տարանջատումն ունի մեծ գործնական նշանակություն՝ տվյալ գործողության կատարման փուլը և կիրառման շրջանակը ճիշտ որոշելու համար: Կատարված հետազոտությունների հիման վրա աշխատանքում եզրահանգում է արվել, որ «ex officio» սկզբունքի բովանդակությունն են կազմում դատավարական այն գործողությունները, որոնք իրականացվում են դատարանի նախաձեռնությամբ, սակայն ուղղված չեն դատավարական ղեկավարմանը, այլ ուղղված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի քննության ընթացքում մասնավոր անձանց փաստացի անհավասարությունը վերացնելուն՝ վերականգնելով նրանց՝ վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց ակտերի, գործողությունների (անգործության) հետևանքով խախտված իրավունքները: Ըստ այդմ, այս սկզբունքը ներառում է դատարանի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու և օժանդակման լիազորությունները:

3. ՎԴՕ-ն, ըստ էության, պարունակելով վարչական դատավարությունում մրցակցության և տնօրինչականության սկզբունքի դրսևորման վերաբերյալ դրույթներ, դրանք չի թվարկել վարչական դատավարության սկզբունքների շարքում, ինչն իրավակիրառ պրակտիկայում ընդունվել է որպես վարչական դատավարությունում «ex officio» սկզբունքի առկայության պայմաններում այս սկզբունքների բացակայություն: Այդուհանդերձ, աշխատանքում վերլուծելով վարչական դատավարությունում «ex officio» սկզբունքով պայմանավորված տնօրինչականության և մրցակցության սկզբունքների դրսևորման առանձնահատկությունները, առաջարկվել է ՎԴՕ-ում ամրագրել այս սկզբունքները որպես վարչական դատավարության առանձին սկզբունքներ: Միաժամանակ, վարչական դատավարությունում տնօրինչականության սկզբունքի առանձնահատկությունների բացահայտման շրջանակներում աշխատանքում անդրադարձ է կատարվել Վարչական դատարանի կողմից հայցվորի չվկայակոչած հիմքով վարչական ակտի իրավաչափության գնահատման հարցին և առաջարկվել է.

1) վարչական ակտի առ ոչինչ լինելը որոշելիս Վարչական դատարանը պետք է գնահատի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված առոչնչության բոլոր հիմքերը՝ անկախ

հայցվորի՝ դրանք մատնանշելու հանգամանքից,

2) վարչական ակտի անվավերության գնահատման դեպքում՝

ա) նախ Վարչական դատարանը պետք է բացառի վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու հիմքերի առկայությունը.

բ) եթե վարչական ակտը անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրվել է դրա՝ օրենքի խախտմամբ ընդունված լինելու փաստը, ապա դատարանը չպետք է կաշկանդվի հայցվորի կամաարտահայտությամբ, իսկ դատարանի կողմից մատնանշումը պետք է վերաբերի լոկ հայցի փաստական հիմքերը համալրելուն: Այսինքն, Վարչական դատարանը պարտավոր է գնահատել վարչական ակտով կարգավորվող իրավահարաբերությանը վերաբերող բոլոր այն իրավական նորմերի շրջանակը, որոնց խախտմամբ կարող է ընդունված լինել վարչական ակտը և գնահատել դրանց պահպանվածությունը.

գ) այն դեպքում, երբ վարչական ակտը անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրվել են միայն վարչական ակտի անվավեր ճանաչման մեկ հիմքին վերաբերող փաստեր, ապա Վարչական դատարանը «ex officio» սկզբունքի ուժով պետք է անդրադառնա մյուս հիմքերին, եթե վարչական վարույթի նյութերից բխում է նման հիմքի առկայությունը:

4. Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության հիման վրա վերհանվել են Վարչական դատարանի՝ ապացույց պահանջելու մասին որոշման կատարման առնչությամբ առկա հիմնախնդիրները (դրանց չկատարումը կամ ապացույցների ուշ ներկայացումը):

Արդյունքում, կարևորելով ողջամիտ ժամկետում գործի քննության և դրա արդյունավետության ապահովման անհրաժեշտությունը՝ առաջարկվել է ապացույց պահանջելու որոշմամբ սահմանել ապացույց ներկայացնելու ողջամիտ ժամկետ, իսկ նախատեսված ժամկետում այդ պարտականությունը չկատարելու կամ դրա կատարման անհնարինությունը չհիմնավորելու դեպքում «ex officio» սկզբունքը համարել իրագործված՝ կիրառելով դատական տուգանք անհարգելի պատճառով ապացույց չներկայացրած կամ սահմանված ժամկետում չներկայացրած անձի նկատմամբ: Արդյունքում, կերաշխավորվի դատական խնայողությունն ու գործի ողջամիտ ժամկետում քննությունը, կնվազեցվի Վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը, կբարձրանա վարչական մարմինների՝ դատարանի կողմից սահմանված ժամկետում դատավարական գործողություններ կատարելու հանդեպ պատասխանատվությունը:

5. ՎԴՕ-ն չի պարունակում կարգավորումներ «ex officio» սկզբունքի կիրառման շրջանակի վերաբերյալ: Արդյունքում ձևավորվել է հակասական

դատական պրակտիկա առ այն, թե այդ սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունը կատարվում են միայն ֆիզիկական և իրավաբանական անձանց, թե նաև վարչական մարմինների օգտին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ex officio» սկզբունքով պայմանավորված Վարչական դատարանի խնդիրն է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի պարզումը՝ ատենախոսության մեջ հիմնավորվել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելիս՝ ապացույցներ պահանջելու, ինչպես նաև գործի լուծման համար անհրաժեշտ փաստերը վեր հանելու համար համարժեք միջոցներ ձեռնարկելիս դատարանի գործողությունները չեն կարող համարվել գործին մասնակցող անձանց օժանդակում, և չեն կարող կաշկանդվել նրանց կամահայտնությամբ, մինչդեռ օժանդակման լիազորությունն իրացնելիս Վարչական դատարանը դրանում ընդգրկվող գործողություններն իրացնում է միայն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց օգտին:

Ընդ որում, քննարկելով Վարչական դատարանի օժանդակման լիազորության իրացման դեպքում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից մատնանշված թերությունները չշտկելու հետևանքները՝ աշխատանքում առաջարկվել է սահմանել, որ Վարչական դատարանի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից թույլ տրված սխալները մատնանշելու և դրանք շտկել առաջարկելու պարտականությունն իրացնելու պարագայում, տնօրինչականության սկզբունքից ելնելով, անձի իրավունքն է շտկել նման սխալները և որոշել ներկայացված հայցի ճակատագիրը, իսկ մատնանշված սխալները չուղղելու դեպքում «ex officio» սկզբունքը համարվում է իրացված:

6. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՎԴՕ 5-րդ հոդվածով բացահայտված չեն հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու, ոչ հստակ հայցային պահանջները ճշտել առաջարկելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու, ոչ բավարար փաստական տվյալները համալրելու գործողությունների իրականացման կարգը, ինչի արդյունքում պարզ չէ, թե դատավարության որ փուլում է իրականացվում այս կամ այն գործողությունը՝ աշխատանքում ըստ կոնկրետ գործողության բնույթի և նշանակության առաջարկվել է այդ գործողություններն իրականացնել կամ հայցադիմումի ընդունելության փուլում և/կամ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

Ամեն դեպքում, գտնում ենք, որ եթե «ex officio» սկզբունքի բովանդակությունը կազմող այս կամ այն դատավարական գործողությունը գործի

քննության սկզբնական (գործի հարուցման կամ հայցադիմումի ընդունելիության) փուլում կատարելու համար առկա են բավարար իրավական և փաստական հիմքեր, ապա Վարչական դատարանը պարտավոր է տվյալ դատավարական պարտականությունը կատարել հենց այդ փուլում՝ ելնելով գործի հետագա քննության արդյունավետությունն ապահովելու նկատառումներից:

7. ՎԴՕ-ն, «ex officio» սկզբունքի իրացման հնարավորություն ընձեռելով նաև Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններին, որևէ դրույթ չի պարունակում վերաքննության և վճռաբեկության փուլերում այս սկզբունքի դրսևորման վերաբերյալ: Աշխատանքում վերլուծելով «ex officio» սկզբունքի իրացման առանձնահատկությունները այս փուլերում՝ առաջարկվել է, որ.

1)Վերաքննիչ և վճռաբեկ դատարանները պետք է կաշկանդված լինեն ոչ թե վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջով, այլ հայցապահանջով և վերաքննիչ բողոքի հիմքերով.

2) վերաքննիչ և վճռաբեկ բողոքում նշված հիմքերը և հիմնավորումներն ունեն ոչ թե կանխորոշող, այլ կողմնորոշող բնույթ.

3) Վերաքննիչ դատարանը նոր ներկայացված ապացույցը պետք է ընդունի միայն այն դեպքում, երբ ապացույց ներկայացրած անձը հիմնավորում է Վարչական դատարանում այդ ապացույցն իրենից անկախ հանգամանքներում չներկայացնելը, այդ թվում՝ երբ Վարչական դատարանը չի պահանջել ներկայացնել ապացույցը.

4) վերադաս դատարանները, անկախ բողոքում նշված լինելու հանգամանքից, պետք է ունենան ստորադաս դատարանի կողմից «ex officio» սկզբունքի պահպանումը ստուգելու պարտականություն.

5) վերադաս դատարանները, անկախ բողոքում նշված լինելու հանգամանքից, պետք է ունենան դատական ակտի անվերապահ բեկանման, ինչպես նաև գործի վարույթը կարճելու հիմքերի առկայությունը ստուգելու պարտականություն.

6) թեև ՎԴՕ-ն Վճռաբեկ դատարանին ևս դիտարկել է որպես «ex officio» սկզբունքն իրացնող սուբյեկտ, այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթներից չի բխում այս սկզբունքի իրացումը: Ուստի, վճռաբեկության փուլում «ex officio» սկզբունքը չի կարող ունենալ առանձին դրսևորումներ, այլ հարց է, որ վարչական դատավարությունում այս սկզբունքի առկայությամբ և ստորադաս դատարանների կողմից դրա կիրառմամբ պայմանավորված վճռաբեկության սահմանները ընդլայնվում են.

7) Վճռաբեկ դատարանի մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու գործառույթը պետք է իրացվի հոգուտ մասնավոր անձանց:

8. Վարչական դատարանի կողմից օժանդակման լիազորության չիրականացումը կամ ոչ պատշաճ իրականացումը կարող է հանգեցնել դատական ակտի բեկանման, ինչը ենթադրում է գործի նոր քննության փուլում այդ լիազորության իրականացում: Այդուհանդերձ, այն դեպքում, երբ դատական ակտը բեկանվում է Վարչական դատարանի կողմից սխալ հայցատեսակ մատնանշելու կամ մատնանշման պարտականությունը չիրացնելու հիմքով, ՎԴՕ-ն պարունակում է օրենսդրական խոչընդոտներ՝ ոչ ճիշտ հայցատեսակը ճիշտ հայցատեսակով փոխարինել առաջարկելու դատարանի լիազորությունը գործի նոր քննության փուլում իրականացնելու համար՝ սահմանելով, որ գործի նոր քննության ընթացքում հայցի հիմքը և առարկան չեն կարող փոփոխվել: Արդյունքում, գործը չի քննվում վերադաս դատարանի կողմից սահմանված ծավալով, ինչպես նաև չի երաշխավորվում անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը: Վերոգրյալի հաշվառմամբ՝ աշխատանքում առաջարկվել է գործի նոր քննության ընթացքում Վարչական դատարանի կողմից ոչ պատշաճ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու առաջարկ ներկայացվելու դեպքում հայցի առարկան փոփոխելու հնարավորություն ամրագրել:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների տեսական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ այն վարչական դատավարությունում «ex officio» սկզբունքի ուսումնասիրությանը և դրա իրացման ընթացքում առաջացող գործնական խնդիրների վերհանմանն ու դրանց լուծման ուղիների քննարկմանը նվիրված առաջին համալիր աշխատանքն է, որը կարող է օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան որևէ կերպ առնչվում է վարչական դատավարության սկզբունքների ուսումնասիրությանը: Ատենախոսությունում առկա վերլուծությունները և առաջարկները կարող են օգտագործվել օրենսդրության բացերը, թերություններն ու հակասությունները վերացնելու համար, կարող են դրական ազդել նաև իրավակիրառ միասնական պրակտիկա ձևավորելու վրա:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր ամսագ-

ներում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են զեկույցների և ամբիոնում ներկայացված գիտական հաղորդումների շրջանակներում:

Ատենախոսության եզրակացությունների և առաջարկների որոշ մասը հիմք են հանդիսացել 2019 թվականի հոկտեմբերի 10-ին Կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության մշակման համար, դրանք ներկայացվել են նաև ՀՀ արդարադատության նախարարությանը «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում արտացոլելու նպատակով (հեղինակը մասնակցել է այդ նախագծի մշակմանը):

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 6 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը, նպատակը և խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության իրավական, փորձառական, մեթոդոլոգիական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը:

Առաջին գլուխը՝ *««Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի ընդհանուր իրավական բնութագիրը»* վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ *««Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի ձևավորումը և հասկացությունը»* վերտառությամբ, ուսումնասիրվել են վարչական դատավարության նպատակներն ու խնդիրները, դատավարության անցկացման ձևերը, «ex officio» սկզբունքի ձևավորման նախադրյալները, վեր են հանվել «ex officio» սկզբունքի հատկանիշները, քննարկվել են այս սկզբունքին տրված բնորոշումները, անդրադարձ է կատարվել «ex officio» սկզբունքի բովանդակությունը կազմող տարրերին և տրվել է դրա հասկացությունը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ *««Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի հարաբերակցությունը վարչական դատավարության գործառութային այլ սկզբունքների հետ»* վերտառությամբ, մանրամասն ուսումնասիրվել և ներկայացվել են վարչական դատավարությունում տնօրինչականության, մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքները:

Երկրորդ գլուխը՝ *««Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացումը վարչական դատարանում»* վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ *«Գործի փաստական հանգամանքները ի պաշտոնե պարզելը»* վերտառությամբ, քննարկվել են վարչական դատարանի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու լիազորության բովանդակությունը և դրսևորումները, այդ լիազորության իրացման հետ կապված հիմնախնդիրները:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ *««Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական այլ գործողությունները և դրանց իրացման կարգը»* վերտառությամբ, բացահայտվել են ՎԴՕ 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործողությունների, ինչպես նաև ՎԴՕ-ով ուղղակիորեն չնախատեսված, սակայն «ex officio» բնույթ ունեցող դատավարական այլ գործողություններից յուրաքանչյուրի նշանակությունը, նպատակը, կիրառման պայմանները և կարգը:

Երրորդ գլուխը՝ *««Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացումը վերաքննության և վճռաբեկության փուլում»* վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ *««Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացումը վերաքննության փուլում»* վերտառությամբ, ներկայացվել են վարչական դատավարությունում վերաքննության տեսակի և վերանայման սահմանների հետ կապված հարցերը, անդրադարձ է կատարվել վերաքննության փուլում «ex officio» սկզբունքի իրացմանը:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ *««Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացումը վճռաբեկության փուլում»* վերտառությամբ, անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի գործառույթներին և «ex officio» սկզբունքով պայմանավորված վճռաբեկության սահմաններին:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները.

1. «Ex officio» սկզբունքը չկապելով բացառապես գործի փաստական

հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության հետ՝ առաջարկվում է դրանում ընդգրկել ոչ միայն գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորությունը, այլև օժանդակման գործառույթը: Մասնավորապես, օժանդակման գործառույթը դրսևորվում է նաև ոչ բավարար փաստական տվյալները համալրել առաջարկելով, հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելով, ոչ հստակ հայցային պահանջները ճշտել առաջարկելով, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելով, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելով և այլ դատավարական գործողությունների իրականացման միջոցով:

2. Ուսումնասիրելով վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորությունը՝ գտնում ենք, որ այն կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերը վերհանելու, դրանց վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ և ապացույցներ ձեռք բերելու համար դատարանի նախաձեռնությամբ դատավարական գործողությունների իրականացումն է:

3. Գտնում ենք, որ վարչական դատավարությունում գործին մասնակցող անձինք կրում են իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերի վկայակոչման պարտականություն (հաստատման ծանրություն), այդուհանդերձ, կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերը պարզելու պարտականությունը կախված չէ կողմերի կամահայտնությունից և անկախ հայցի հիմքի փաստերից դատարանը պարտավոր է միջոցներ ձեռնարկել նրանց կողմից չվկայակոչված, սակայն գործի լուծման համար անհրաժեշտ փաստերի պարզման ուղղությամբ:

4. Գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության կարևոր գործիք հանդիսացող ոչ բավարար փաստական տվյալների համալրումն առաջարկվում է իրականացնել հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում, եթե առանց այդ փաստերը համալրելու անհնար է որոշում կայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին (օրինակ՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելուն կամ դատարան դիմելու իրավական շահագրգռվածությանը վերաբերող փաստական տվյալներ), իսկ մյուս բոլոր դեպքերում՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

5. Առաջարկվում է Վարչական դատարանի՝ ապացույց պահանջելու մասին որոշմամբ սահմանել ապացույց ներկայացնելու հստակ և ողջամիտ ժամկետներ, իսկ այդ որոշումը կատարելու համար նոր ժամկետ չսահմանելու կամ ապացույցը չներկայացնելու պատճառները հարգելի չճանաչելու

դեպքում Վարչական դատարանը ապացույց պահանջելու մասին որոշման հիման վրա կազմված կատարողական թերթն անհապաղ պետք է ուղարկի հարկադիր կատարման:

Վարչական դատարանը յուրաքանչյուր գործով գնահատելով ապացույց չներկայացնելու կամ սահմանված ժամկետում այն չներկայացնելու անհնարինությունը՝ պետք է անցում կատարի վճռահատության՝ վճռի կայացումը չառկախելով ստացվող ապացույցներից: Այլ կերպ ասած՝ ապացույց ներկայացնելու պարտականությունը սահմանված ժամկետներում և կարգով չկատարելու դեպքում ex officio սկզբունքը պետք է համարել իրագործված, իսկ ապացույց ներկայացնելու պարտականություն կրող անձը պետք է կրի այն չներկայացնելու հետ կապված բացասական հետևանքները:

6. Առաջարկում ենք, որ՝

1) հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու պարտականությունը չի կարող նույնացվել հայցադիմումին ներկայացվող պահանջները չպահպանելու վերաբերյալ սխալների մատնանշման հետ.

2) հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու պարտականությունը չի կարող մեկնաբանվել որպես հայցադիմումի բովանդակության ուսումնասիրություն և դրա հետ կապված սխալների մատնանշում.

3) հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու պարտականությունը կարող է իրացվել հայցադիմումի ընդունելության փուլում, եթե առկա են հայցադիմումը վերադարձնելու ՎԴՕ-ով նախատեսված հիմքեր, իսկ մյուս բոլոր դեպքերում՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում.

4) ՎԴՕ 89-րդ հոդվածի 3-րդ մասում որպես նախնական դատական նիստում իրականացվող գործողություն լրացնել հայցադիմումում առկա ձևական սխալները և դրանց վերացման ուղղված գործողությունները և դրանց կատարման ժամկետները մատնանշելը:

7. Վերլուծելով Վարչական դատարանի ոչ հստակ պահանջները հստակեցնելու առաջարկ ներկայացնելու լիազորությունը՝ գտնում ենք.

1) ՎԴՕ 5-րդ հոդվածի 3-րդ մասում «առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «առաջարկում է ճշտել ոչ հստակ պահանջ» բառերով՝ այսպիսով Վարչական դատարանի «ex officio» լիազորությունների շարքում ներառելով ոչ միայն հայցադիմումներում, այլև դիմումներում առկա ոչ հստակ պահանջները մատնանշելը.

2) հայցադիմումում ոչ հստակ պահանջ ներկայացված լինելը հիմք է

հանդիսանում տվյալ հայցադիմումը վերադարձնելու համար, իսկ սահմանված ժամկետում հայցադիմումը՝ պահանջի ձևակերպման մասով սխալը չվերացված տարբերակով կրկին ներկայացնելու պարագայում, կարող է ընդունվել վարույթ միայն այն դեպքում, եթե հայցապահանջի ձևակերպման հետ կապված թերության չվերացումը չի հանդիսանում արգելք գործի քննության համար.

3) ոչ հստակ պահանջները հստակեցնելու առաջարկ ներկայացնելու դեպքում դատարանի մատնանշման պարտականությունը համարվում է կատարված անկախ նրանից թե հայցվորը կհստակեցնի պահանջը, թե ոչ.

4) ոչ հստակ պահանջները հստակեցնելու առաջարկ ներկայացնելու վարչական դատարանի լիազորությունն իրացվում է հայցադիմումի ընդունելության փուլում, ինչպես նաև գործը դատաքննության նախապատրաստելու փուլում.

5) ՎԴՕ 89-րդ հոդվածի 3-րդ մասում որպես նախնական դատական նիստում իրականացվող դատավարական գործողություն լրացնել ոչ հստակ պահանջները հստակեցնել առաջարկելը և այդ գործողության կատարման ժամկետները մատնանշելը.

6) ոչ հստակ պահանջները հստակեցնելու առաջարկ ներկայացնելու հիմքով հայցադիմումը վերադարձնելու պարագայում կրկին ներկայացված հայցադիմումով սխալները չշտկելու դեպքում վարչական դատարանը կարող է մերժել հայցադիմումի ընդունումը ՎԴՕ 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ուժով, եթե պահանջի ձևակերպման հետ կապված թերության չվերացումն արգելք է գործի քննության համար:

8. Վերլուծելով վարչական դատարանի ոչ պատշաճ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու լիազորությունը՝ գտնում ենք.

1) որպես հայցադիմումը վերադարձնելու հիմք անհրաժեշտ է լրացնել նաև ոչ պատշաճ հայցատեսակ ներկայացնելը, որի պարագայում դատարանը հայցադիմումը վերադարձնելու որոշման մեջ պետք է հստակ նշի ներկայացված հայցատեսակի հետ կապված հնարավոր խնդիրները և մատնանշի այն հայցատեսակը, որով անձը կարող է հասնել իր համար ցանկալի արդյունքի.

2) ոչ պատշաճ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու առաջարկ ներկայացնելու լիազորությունը կարող է իրացվել նաև գործը դատաքննության նախապատրաստելու փուլում.

3) ոչ պատշաճ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու առաջարկ ներկայացնելու դեպքում պատշաճ հայցատեսակ ներկա-

յացնելու համար նախատեսված ժամկետը լրացած լինելու դեպքում դատարանը մատնանշման պարտականությունն իրացնելիս պետք է մատնանշի նաև պատշաճ հայցատեսակի համար դատարան դիմելու ժամկետի լրացած լինելու փաստը և այն վերականգնելու համար միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությունը.

4) ՎԴՕ 89-րդ հոդվածում որպես նախնական դատական նիստի ընթացքում իրականացվող դատավարական գործողություն նախատեսել ոչ պատշաճ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինել առաջարկելը՝ նշելով այդ գործողության իրականացման եղանակը և ժամկետը.

5) ոչ պատշաճ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու անհրաժեշտության հիմքով հայցադիմումը վերադարձնելու պարագայում սխալները չշտկելու դեպքում վարչական դատարանը կարող է մերժել հայցադիմումի ընդունումը ՎԴՕ 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ուժով, եթե հայցատեսակի փոփոխության հետ կապված թերության չվերացումն արգելք է գործի քննության համար:

9. Ուսումնասիրության առարկա դարձնելով հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու Վարչական դատարանի լիազորությունը՝ եզրահանգել ենք, որ միմյանց հետ փոխկապակցված պահանջները տարբերակելու լիազորությունը իրացվում է հայցադիմումի ընդունելիության փուլում և այդ լիազորությունը իրացնելուց հետո, վարչական դատարանը պարտավոր է, չկաշկանդվելով հայցվորի կողմից իրականացված պահանջների տարբերակմամբ, որոշել հիմնական պահանջի իրեն ընդդատյա լինելու և պահանջն ըստ ընդդատության վերահասցեագրելու հարցերը:

10. Անհրաժեշտ է «ex officio» օժանդակման լիազորությունների թվին դասել նաև ատենախոսության մեջ քննարկված դատավարական այլ գործողությունները, ինչպես օրինակ, «ex officio» սկզբունքի ուժով ոչ միայն հայցադիմումում առկա ձևական սխալները, այլև այն սխալները մատնանշելը, որոնք անձը թույլ է տալիս փորձելով ձեռնարկել իր իրավունքների պաշտպանությանն ուղղված դատավարական գործողություններ՝ օրինակ միջնորդություններ ներկայացնելու դեպքում թույլ տրվող սխալները:

11. «Ex officio» սկզբունքի հիմնական նպատակը՝ այն է ուժերի հավասարակշռությունը ապահովելու և վարչական մարմինների կողմից չարաշահումները կանխելու համար, գտնում ենք, որ Վերաքննիչ դատարանը նոր ներկայացված ապացույցը պետք է ընդունի միայն այն դեպքում, երբ ապացույց ներկայացրած անձը հիմնավորում է Վարչական դատարանում այդ ապացույցը իրենից անկախ հանգամանքներում չներկայացնելը, այդ թվում՝ երբ Վարչական դատարանը չի պահանջել ներկայացնել ապացույցը:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Պետրոսյան Լ. «Գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու («ex officio») սկզբունքի իրացումը վարչական դատավարությունում ոչ պատշաճ հայցատեսակ ներկայացնելիս» // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2017, էջեր 443-456:

2. Պետրոսյան Լ. «Գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու ("ex officio") սկզբունքի ընդհանուր իրավական բնութագիրը» //ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2018 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 1(1) 2018, էջեր 287-298:

3. Պետրոսյան Լ. ««Ex officio» սկզբունքի իրացման առանձնահատկությունները վերաքննության փուլում» // Պետություն և իրավունք, N 2 (87) 2020, Երևան, էջեր 48-56:

4. Պետրոսյան Լ. «Վարչական դատարանի՝ հայցադիմումում առկա ձևական սխալները մատնանշելու «ex officio» լիազորության իրացումը», // Դատական իշխանություն, Երևան, 2020, N 3-4, էջեր 116-122:

5. Պետրոսյան Լ. «Տնօրինչականության սկզբունքի դրսևորման առանձնահատկությունները վարչական դատավարությունում», // Արդարադատություն, Երևան, 2020, N 2 (51), էջեր 24-29:

6. Պետրոսյան Լ. ««Ex officio» և մրցակցության սկզբունքների հարաբերակցությունը վարչական դատավարությունում» // Օրինականություն, Երևան, 2020, N 117, էջեր 69-75:

7. Պետրոսյան Լ. «Վարչական դատարանում «ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացման որոշ հիմնախնդիրներ», // Արդարադատություն, Երևան, 2021, N 1 (53), էջեր 62-68:

LILIT HOVHANNES PETROSYAN

APPLICATION OF "EX OFFICIO" (EXAMINATION OF THE CASE BY THE RIGHT OF OFFICE) PRINCIPLE IN ADMINISTRATIVE COURT PROCEDURE

SUMMARY

Administrative justice is one of the "youngest" and at the same time one of the least analyzed legal institutes not only in Armenia but also in the post-soviet countries.

During 13 years of the existence of this legal branch, two codes of Administrative Court Procedure have been adopted, which regulated the main issues of administrative justice, also stipulating principles of administrative court procedure.

Among the principles of administrative court procedure the "ex officio" principle plays an important role, as it conditions the peculiarities of administrative justice and empowers the court with an active role to establish the actual circumstances of the case, to eliminate the actual advantages of public authorities over individuals or legal entities and ensure the efficient protection of those entities rights.

Having such importance the "ex officio" principle is not fully analyzed and explored in administrative court procedure and it has raised different problematic issues in practice, and still there is no scientific research on this topic.

Specifically, the code of Administrative Court Procedure does not have detailed regulations on the definition, content, the scope and application of "ex officio"principle, as a result, there is no unified practice on the judicial actions forming the content of this principle, the application and scope of these judicial actions, the manifestation of "ex officio"principle at the stages of appeal and cassation.

Moreover, the examination of opinions received from Administrative court judges concerning the application of "ex officio"principle showed that there is not a unified approach towards judicial actions forming the content of this principle, for example, actions taken by the judge to establish facts, which are

not mentioned by the parties, the stages of applying judicial actions which are deemed “ex officio”, the scope and subjects of these actions and numerous other issues.

Thus, it can be concluded, that legislative gaps and already formed contradicting practice regarding “ex officio” principle decrease the efficiency of administrative justice, limit the safeguards for protecting individual’s rights and freedoms through administrative justice and lead to overloading of Administrative Courts.

Thus, there is a necessity to form the definition and content of “ex officio” principle, reveal the importance and application of each of the judicial actions forming the content of this principle, indicate the peculiarities of manifestation of “ex officio”principle at the stages of appeal and cassation, eliminate the legislative gaps and issues, highlight the existing issues in the legal practice and elaborate possible solutions.

The importance of the indicated issues and the need to address them determine the relevance of this study.

The dissertation is the first comprehensive research on theoretical and practical issues regarding “ex officio” principle, in which an attempt was made to address in as much detail as possible the issues of a theoretical nature related to the implementation of the "ex officio" principle, as well as the practical problems arising during the application of the "ex officio" principle.

As a result, both theoretical generalizations and scientific-practical suggestions were made. The dissertation has not only theoretical but also practical significance as the suggestions and analyzes available in the dissertation can be used to improve the legislation and law enforcement practice.

The fundamental standpoints of the thesis have been reflected in the scientific articles published by the author.

ПЕТРОСЯН ЛИЛИТ ОГАНЕСОВНА

РЕАЛИЗАЦИЯ ПРИНЦИПА “EX OFFICIO” (РАССМОТРЕНИЯ ДЕЛА ПО ДОЛЖНОСТИ) В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

РЕЗЮМЕ

Административная юстиция - один из самых «молодых» и в то же время наименее исследованных правовых институтов не только в нашей стране, но и на всем постсоветском пространстве. За 13 лет существования этой отрасли права двумя кодексами административного судопроизводства, принятыми в Республике Армения, были урегулированы ключевые вопросы административной юстиции, в том числе были предусмотрены принципы административного судопроизводства.

Среди этих принципов особое место занимает принцип “ex officio” (рассмотрения дела по должности) (далее именуемый также принципом “ex officio”), который позволяет суду играть активную роль в формальном разъяснении фактов, необходимых для разрешения дела, для обеспечения устранения фактических преимуществ субъектов, наделенных публично - властными полномочиями перед физическими и юридическими лицами, и эффективной защиты прав этих лиц.

Имея такое важное значение этот принцип является одним из малоизученных в административном судопроизводстве и вызвавших ряд проблемных вопросов в правоприменительной практике принципов, по которому до сих пор нет всеобъемлющих научных трудов. В частности, Административно-процессуальный кодекс РА не содержит подробных определений понятия, содержания, объема и круга применения принципа “ex officio” (рассмотрение дела по должности), его реализации, в результате чего отсутствует единая судебная практика по проявлению данного принципа на этапах состава процессуальных действий, составляющих содержание данного принципа, порядка и объема их реализации, обжалования и кассации.

Более того, обобщение позиций, полученных судьями Административного суда в отношении реализации принципа “ex officio”, показывает, что не существует единых подходов и к ряду процессуальных действий,

составляющих содержание этого принципа, таких как принятие судом мер, направленных на выяснение и подтверждение не приведенных сторонами фактов, этапы, объемы реализации процессуальных действий и ряд других вопросов.

Таким образом, можно констатировать, что существующие пробелы в законодательстве по принципу “ex officio” и сформированная противоречивая правоприменительная практика снижают эффективность административной юстиции, ограничивают гарантии защиты прав и свобод граждан посредством административной юстиции, а также приводят к перегруженности Административного суда.

В результате, необходимость раскрытия понятия и содержания принципа “ex officio”, раскрытия значения, условий применения каждого из процессуальных действий, характерных принципу “ex officio”, раскрытия специфики проявления принципа “ex officio” на этапах апелляции и кассации, устранения законодательных пробелов и недочетов, а также необходимость выявления проблем в правоприменительной практике и выработки возможных путей их решения объективно придают актуальность данному исследованию.

Работа является первым всеобъемлющим и целостным исследованием принципа “ex officio” в отечественной юриспруденции, в котором была сделана попытка как можно более подробно рассмотреть ряд вопросов теоретического характера, связанных с реализацией принципа “ex officio”, и практические вопросы, возникающие при реализации процессуальных действий, составляющих содержание принципа “ex officio”.

В результате указанного были сделаны как теоретические обобщения, так и предложение научно-практического характера. Диссертация имеет не только теоретическое, но и практическое значение, так как имеющиеся в диссертации предложения, анализы могут быть использованы для совершенствования законодательства и правоприменительной практики.

Основные положения диссертации нашли свое отражение в опубликованных автором научных статьях.